

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Այս ամառ շատ ազմուկ հանեց — եւ խորհրդային մամուլում այսօր էլ դեռ խօսուում է — Խորհրդ. Միութեան պատմութեան դասագրքի շուրջ, որով այսուհետեւ խորհրդային դպրոցներում պէտք է ականդւի «մեր հայրենիք»-ի պատմութիւնը: Այդ դասագիրքը կոչուում է «Համառօտ դասընթաց հորհրդ. Ընկերվ. Հանրապետութիւնների Միութեան պատմութեան»: Կազմւած է մասնագէտների մի յանձնախմբի ձեռքով՝ խմբագրութեամբ պրոֆ. Ա. Վ. Շետտակովի: Հաստատւած է Համամիութենական Կառավարական Յանձնախմբից: Յատկացւած է երրորդ եւ չորրորդ դասարաններին:

Դասագիրքը ներկայ ուսումնական տարւանից արդէն դրւած է դործագրութեան խորհրդային դպրոցներում: Թարգմանւած է բոլոր լեզուներով եւ հրատարակւած բազմամիլիոն օրինակներով: Մեր ձեռքի տակինը ուսուերէն բնագիրն է առաջին տպագրութեան, որ լոյս է ընծայւած հինգ միլիոն օրինակ:

Իրբքը կազմւած է շատ պարզ ու մատչելի լեզուով: Զարգարւած է բազմաթիւ նկարներով եւ քարտէսներով: Առաջ բերւած են եւ ուսանցեալ պատմութեան հերոսների պատկերները, ինչպէս նաեւ դանազան դէպքերի եւ պատմական վայրերի, նոյնիսկ եկեղեցիների նրկարներ: Իբրեւ դպրոցական ձեռնարկ, Շետտակովի գիրքը հիմնաւորւած է մանկավարժական որոշ սկզբունքներով եւ անպայման կազդէ աշակերտների մտքի վրա:

Փոքրիկ ջատագովակն ներածութիւնից յետոյ — «Մեր Հայրենիքը» — գիրքը սկսուում է «մեր հայրենիքի հեռաւոր անցեալով», որից դուրս է գալիս, որ «մեր երկրի ամենահին պետութիւնը» Վրաստանն է: Ահա թէ ինչպէս. «Մեր երկրի ամենահին պետութիւնները ծագել են Անդրկովկասի հարաւում: Այդ տեղի է ունեցել 3000 տարի առաջ: Անդրկովկասի առաջին պետութիւնը կոչուում էր Ուրարտու, Արարատի շրջանում: Վանի լճի մօտ: Նրա պետերը իշխում էին վրացական ցեղերի վրա: Նրանք ունէին շատ ստրուկներ, որոնք նրանց համար շինում էին պալատներ, թագաւորական արտերն ու այգիները ոռոգելու համար փորում էին առուներ: Այդ՝ այժմայն Վրաստանի նախահայրերի պետութիւնն էր»:

Այսպէս, ուրեմն, Ուրարտուն Վրաստանն էր: Եւ ո՛չ մի խօսք Հայաստանի մասին: «Վրաստանում աւելի քան 2000 տարի առաջ հը-

նարեւել է այրուբները: Քաղաքներում երեւացին առաջին գիտնականները, սկսեցին դարգանալ գիտութիւններն ու արեւատը»: Իսկ Հայաստանում:

Այնուհետեւ գիրքը խօսում է Սիրիերի եւ Արեւել. Եւրոպայի ժողովուրդների մասին եւ անցնելով Սլաւներին՝ գլուխ առ գլուխ տալիս է ուսանորի պատմութիւնը — Կիւելի իշխանութեան կազմութիւնը, Օլեգի, Իգորի, իշխանուհի Օլգայի եւ Սվետոսլաւի գործերը, ուսանորի քրիստոնէութիւնը ընդունելը Վլադիմիրի օրով. «Քրիստոնէութիւնը իր ժամանակին, կոապաշտութեան համեմատութեամբ, մի քայլ էր դէպի սուաջ Ռուսաստանի դարգացման մէջ», ասում է դասագիրքը:

Յետոյ, իրար յետեւից տրուում է Կիւելի, Նովգորոդի եւ Սուզդալի իշխանութիւնների պատմութիւնը, մոնղոլական ու թաթարական արշաւանքներն ու տիրապետութիւնը: Գուրս է դալիս, որ «Ձինգիս — խանի գորքերը՝ անցնելով Կասպից ծովի հարաւային ափերից՝ մըտան Կովկաս եւ դրուեցին Հայաստանն ու Վրաստանը: Վրաստանում մոնղոլները գտան ուժեղ դիմադրութիւն. Վրաստան այդ ժամանակ աւելի դորաւոր պետութիւն էր, քան Հայաստանը: Քաջարար կրուեցին վրացիները, բայց մոնղոլները նրանց ջարդեցին եւ Վրաստանի ու Հայաստանի վրա ծանր տուրքեր դրին» (էջ 23):

Ուրեմն, հայերը թոյլ էին եւ ո՛չ մի դիմադրութիւն ցոյց չուին: Այսպէ՛ս է գրուում պատմութիւնը խորհրդային աշխարհում: Եւ, առ հասարակ, դասագրքի մէջ, սկզբից մինչեւ վերջ, ո՛չ մի նպատաւոր խօսք չկայ հայերի եւ Հայաստանի մասին:

Այնուհետեւ, յաջորդարար, պատմուում է Մոսկւայի իշխանութեան ծագումն ու ծաւալումը, մոսկովցիների պայքարները Լիտւայի եւ Լեհաստանի դէմ, Լէնկիթէմուրի արշաւանքը: Յիշուում է, որ «14-րդ դարի վերջին Լէնկիթէմուրը կործանեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին եւ գերի առաւ վրաց թագաւորին», իսկ թէ ինչե՛ր պատահեցին այդ օրերին Հայաստանում — ո՛չ մի խօսք:

Ապա՝ երկարօրէն խօսուում է «ուս ազգային պետութեան կազմութեան» եւ Ռուսաստանի տարածման եւ ուժեղացման մասին — Մոսկւայի իշխանութեան ազատելը թաթար — մոնղոլական լծից, պատերազմներ Լիտւայի եւ Լեհաստանի հետ, «Իվան Երրորդ՝ թագաւոր համայն Ռուսիոյ», Իվան Ահեղ եւ Ռուսաստանի ծաւալումը, Սիրիերի նաւաւումը Երմակի ձեռքով, Բորիս Գոգոլնովի թագաւորութիւնը, ուս — լեհական պատերազմները, ուս ազգային հերոսներ Մինին եւ Պոժարսկիյ, Ռոմանովների տոհմի գահակալութիւնը, լեհ — ուկրայնական պատերազմները եւ Ուկրայնայի միացումը Ռուսաս-

տանին, Արեւելեան Սիրիբի նւաճումը, Ռուսաստանի ներքին պայմանները եւ այլն :

Շատ տեղ է տրւած Պետրոս Մեծին, նրա վարած պատերազմներին, մտցրած բարեկարգութիւններին, կատարած նւաճումներին : Իրանի հետ ունեցած պատերազմի կապակցութեամբ ասուում է, թէ՛ «Պետրոսը հաւաքեց 80 հազարնոց մի բանակ եւ Աստրախանից առաջ խաղաց Իրանի դէմ : Պետրոսը նախօրօք համաձայնութեան էր եկել Իրանի տիրապետութեան տակ դռնուղ վրացական իշխանների եւ հայ վաճառականների հետ, որոնք պէտք է օգնէին նրան Իրանի պետ շահի հետ պատերազմելու» : Եւ, սակայն, ո՛չ մի խօսք այն մասին, թէ Պետրոսը ի՛նչպէս, Կասպից ծովի եզերքները զբաւելուց յետոյ, խաբեց ու չկատարեց հայերին եւ վրացիներին տւած խոստումը : Պետրոս Մեծը բուշեւիկեան դասազրքում ներկայացւած է իրբեւականաւոր դէմք, որի օրով «Ռուսաստանը շատ առաջ գնաց» :

Այնուհետեւ դալլիս եւ Աննայի եւ Ելիզաւետայի թագաւորութիւնները, Լոմոնոսով ոռւս գիտնականը, Եկատերինա Երկրորդը, Խրիմի եւ Ուկրայինայի մնացած մասի բռնազբաւումը, Լեհաստանի բաժանումը, Պաւլի եւ Ալեքսանդր Ա.-ի թագաւորութիւնները : Վերջինիս օրով տեղի ունեցաւ Վրաստանի կցումը Ռուսաստանին. դասազիրքը հանդամանօրէն պատմում է այդ դէպքը : Հայաստանի գբաւման մասին, սակայն, բառացի ասւած է հետեւեալը. «Նիկոլայ Ա.-ի օրով ոռւս զօրքերը ջարդեցին շահի զօրքերը եւ Ռուսաստանին միացրին Հայաստանը, որի ժողովուրդները հարիւրաւոր տարիներ տառապել էին Իրանի վարիչների լծի տակ» : Աւելի երկար խօսւում է Կովկասի նւաճման մասին, մասնաւորապէս Շամլիի կռիւնների :

Չուզրնթացարար խօսք կայ «մեծ ոռւս զրոյների մասին» — Պուշկին, Բելինսկիյ, Լերմոնտով եւ այլն :

Մանրամասնօրէն ներկայացւած է Նիկոլայ Ա.ի եւ Ալեքսանդր Բ.ի ժամանակաշրջանը Ռուսաստանի ներքին եւ արտաքին հանդամանքներով : 1877 - 78 թ. ոռւս - թրքական պատերազմից յիշոււմ է միայն, «որ Ռուսաստանը ստացաւ Բաթումը՝ խոշոր առեւտրական մի նւաճանգիստ Սեւ ծովի վրա» : Կարսը, պատերազմի գլխաւոր աւարը, մոռացութեան է տրւել :

Այս շրջանից էլ յիշւած են ոռւս ազգային ականաւոր դէմքեր, ինչպէս Գերցէն, Չերնիշեւսկի, Նեկրասով, Տոլստոյ, Բէպին եւ ուրիշ նշանաւոր գրողներ, նկարիչներ ու երաժիշտներ :

Սկսոււմ են նոր ժամանակների յեղափոխական շարժումները, նարոյնիկների ու մարքսիստների վէճերը եւ, ի հարկէ, երկար - եր-

կար տեղ է տրուում Լենինին եւ Ստալինին, որոնք նախապատրաստեցին կոմունիստական յեղաշրջումը: Շատ տեղ է տրուած մենչելիկներին եւ Էսէրնների «սոցիալ – հաշտողական» եւ բուրժուամիտ դործունէութեան, Լենինի վէճերին Մարտովի եւ Տրոցկիի հետ, ուսական առաջին յեղափոխութեան: Այդ օրերին Կովկասում պատահած դէպքերից յիշուած է միայն, որ «Վրաստանում գիւղացիները զաղարեցրին կալւածատէրերին տուրք վճարելը: Մի շարք տեղերում նրանք գրաւեցին հողերը, արօտավայրերը, անտառները, չէին ճանաչում ցարական ոչ մի իշխանաւոր: Գործերը վարում էին իրենք գիւղացիները» (էջ 125):

Եւ յետոյ. «Անդրկովկասում ընկեր Ստալինի ղեկավարութեան տակ բանւորներն ու գիւղացիները քաջարար կուում էին ցարական զօրքերի դէմ: Ամբողջ Վրաստանը բռնուած էր ապստամբութեամբ: Վրաստան նետուեց մեծ քանակութեամբ ցարական զօրք: Մէկից աւելի անգամներ վրացի բանւորներն ու գիւղացիները կուի բռնեցին նրանց հետ» (էջ 133):

Եւ դարձեալ՝ ո՛չ մի խօսք հայ յեղափոխութեան մասին. կարծես հայերը չէին, որ առաջինը բողոքի ձայն բարձրացրին ցարական բռնակալութեան դէմ ազգային կալւածների եւ դարձրոցների դժբաւման առթիւ: Կարծես ամբողջ Հայաստանը չէր առաջին ապստամբողք, երբ Վրաստանում դեռ ո՛չ մի շարժում չկար: Կարծես Հայաստանը չէր առաջինը, Փինլանդիայի հետ, որ բոլիոտ յայտարարեց սուս կառավարութեան եւ ինքը իր ձեռքն առաւ ազգային ներքին գործերը: Կարծես հայերի ձեռքով չէր, որ շանսատակ եղան Նահաշիճէները, Եակովլեւները եւ բազում ուրիշ սուս իշխանաւորներ եւ նոյն ինքն զօր. Ալիխանովը՝ վրացական գիւղացիական շարժումների զսպիչը:

Դասագրքի վերջին մասը — մէկ երրորդը — նւիրուած է համաշխարհային պատերազմի տարիներին պատահած դէպքերին, ուսական երկրորդ յեղափոխութեան եւ խորհրդային իշխանութեան: Երկար խօսելն այս մասին աւելորդ ենք համարում. հասկանալի է, թէ ինչ ձեւով ու բովանդակութեամբ ներկայացուած պէտք է լինին այդ դէպքերը: Ամէն սուտ, կեղծիք ու խեղաթիւրում թոյլ է տրուած, որպէսզի փայլուն դոյներով ներկայացուին բոլշեւիկների գործերը, մանաւանդ Լենինը, բայց եւս առաւել՝ Ստալինը: Սրա հանճարեղ գործի թաղն ու պսակն է «մեծ ստալինեան Սահմանադրութիւնը», որով փակուած է գերբը:

Դասագրքի այս վերջին մասից էլ առաջ բերենք անդրկովկասեան դէպքերը: Բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ, «Գերմանիան օգնեց,

որ Վրաստանում ամբողջական վրաց ժողովրդի թշնամիները՝ մենչեւիկները : Մենչեւիկները Վրաստանում արիւնոտ ճանապարհով իշխանութեան գլուխ եկան : Նրանք գնդակահարեցին շատ բանւորներ ու գիւղացիներ, որ պայքարում էին խորհուրդների իշխանութեան համար :

« Հայ բանւորներին եւ գիւղացիներին նոյնպէս չյաջողեց մէկէն ազատել բուրժուական ճնշումից : Հայաստանում Դաշնակիցները ոյժ էին տալիս հայ ժողովրդի թշնամի դաշնակիներին :

« Թիւրքերը ուրում էին գրաւել Այրբէյջանի Բագուն իր խոչոր նաւթային արդիւնաբերութեամբ : Բագուն 1918-ին կար խորհուրդների իշխանութիւն : Բագուի խորհուրդի գլուխ կանգնած էր բուլչեւիկ ընկեր Ստեփան Շահումեանը եւ ուրիշ հին բուլչեւիկներ — ընկեր Ստալինի մտերիմներն ու աշակերանները : Այրբէյջանի ժողովրդի թշնամի մուսաւթականները, մենչեւիկները եւ էսէրները հետ միասին, իբր թէ քաղաքը Թիւրքերից փրկելու նպատակով, 1918-ի ամառը Բագու հրաւիրեցին անգլիական զորքեր : Գրաւելով քաղաքը՝ անգլիացիք ձերբակալեցին Շահումեանին, Այիդեզովին, Զախարիձէին եւ Բագուի ուրիշ կոմիսարներ, տարին Թիւրքմենիստան եւ զընդակահարեցին աւաղների մէջ, թւով 26 հոգի» (էջ 171) :

Անդրկովկասեան անկախ հանրապետութիւնները մասին՝ ո՛չ մի խօսք, բայց «1920-ի դարնանից Անդրկովկասում, ուր Դաշնակիցների աջակցութեամբ կառավարում էին բուրժուական ազգայնականները՝ վրացի մենչեւիկները, հայ դաշնակիները եւ Այրբէյջանի մուսաւթականները՝ սկսեցին բանւորների եւ գիւղացիների ապստամբութիւններ : Նրանց օգնութեան հասաւ կարմիր բանակը ընկերներ Օրջոնիկիձէի, Բիրովի եւ Միկոյեանի գլխավորութեամբ : Բուրժուազիայի իշխանութիւնը տապալեց եւ Անդրկովկասի ժողովուրդները — Այրբէյջանի, Հայաստանի եւ Վրաստանի — մտան խորհրդային երկրի ժողովուրդների համերաշխ ընտանիքի մէջ» (էջ 184) :

Այսքան : Մենք հանգամանօրէն առաջ բերինք դասազրքի բովանդակութիւնը : Թէեւ կարելի էր դեռ շատ բան ասել, բայց ասածից էլ դժւար չէ դադարի կազմել զրքի էութեան մասին : Ծանօթ ընթերցողը հեշտութեամբ կը նկատէ, որ սա ցարական Ռուսաստանի պատմութեան դասազրքեր յորինող Իլովայսկիի եղանակով ու ուղիով կազմած գիրք է, որ, վերջին հաշւով, հետապնդում է միեւնոյն նպատակը՝ տիրող իշխանութեան փառաբանութիւնը, եւ միեւնոյն հետեւանքները՝ ուսւ ազգայնականութեան տիրապետութիւն եւ օտարների ձուլում ուսմանը հետ :

Դասագիրքը, փոքրիկ շեղումներով, սկզբից մինչև վերջ ուսուցիչի պատմութիւնն է : Անշուշտ, պատմական դէպքերին բուշեւիկ Շեստակովը այլ բացատրութիւն է տալիս, քան ցարական Իլովայըսկին, բայց դրանից խնդիրը չի փոխուում՝ ուսուցիչի անցեալի մեծ դէպքերն ու մեծ դէմքերը բուշեւիկներին կողմից էլ փառաբանուած են, ինչպէս փառաբանուում էին եւ ցարական ուսուցիչից : Եականը այն չէ, թէ դասագրքի մէջ ինչ մտքեր են յայտնուած, դիտարկելով պատմութիւնը դէպքերն ու ներկայացուած դէմքերն են : Ինչպէս ցարական իշխանութեան օրով, այսօր էլ դպրոցներում ուսուցանուած են, որ ուսուցիչը մեծ ազդ է, որ տւել է Վլադիմիր Մոնոմախի, Պետրոս Մեծի, Պոլեզիսի ու Լենինի պէս հերոսներ, մի լրացումով միայն, որ ուսուցիչը մեծ ազդ է կողքին կայ եւ վրացի մեծ ազդը, որ ծնել է հանճարեղ Ստալինին : Այսօր էլ դպրոցականների համար ոգեւորութեան աղբիւր պէտք է լինին Մինիններն ու Պոթարսկիները, որոնք Ռուսաստանը ազատեցին լեհական վտանգից : Կուլիկովի ճակատամարտը, որ վերջ տւեց թաթարական տիրապետութեան, այսօր էլ նւիրական է խորհրդային աշակերտների համար :

Մի խօսքով, ուսուցիչը մեծ ազդ է ուսուցիչի բարձր մշակոյթ, ուսուցիչի հանճարեղ իշխաններ, թաղաւորներ, պետական մարդիկ, զօրավարներ, դիտարկողներ, դրոշմներ, արեւստագէտներ, յեղափոխականներ, որոնց մեծագործութիւններով դարձարւած է «Մեր Հայրենիք»-ի անցեալ պատմութիւնը, եւ դրանց կողքին մանր ազդերը՝ թղուկի հասակով եւ աննշան գործերով — ի՞նչ է մնում խորհրդային դրութեան աշակերտին, եթէ ոչ՝ ոգեւորել ուսուցիչի մեծ գործերով ու մեծ հերոսներով եւ լուծել ուսուցիչի ծովում : Այդպէս էր ցարերի օրով, այդպէս է եւ այսօր բուշեւիկների օրով : Ըստ էութեան եւ հետեւանքներով՝ ո՛չ մի տարբերութիւն :

Եթէ այս դասագիրքը յատկացուած լինէր միայն ուսուցիչի դրութեան եւ ուսուցիչի աշակերտներին, խօսք կարող էր լինել միայն բուշեւիկեան ըմբռնումների մասին, բայց Ռուսաստանի պատմութեան դէմ ի՞նչ կարելի էր առարկել. ի հարկէ, ուսուցիչ էլ պէտք է սովորել իր ազգային պատմութիւնը : Բայց երբ խորհրդ. Միութեան սահմաններում ապրող բոլոր փոքրամտերներին, հետեւաբար եւ հայերին, պարտադրուած է ուսուցիչի եւ ուսուցիչի պատմութիւնը ընդունել իրեն իրենց հայրենիքի պատմութիւն, դրա դէմ կարելի չէ չըմբռնուած ու չբողոքել : Եւ, կասկած չկայ, վաղ թէ ուշ, Ստալինի հրահրութեամբ ու չարտիկներն էլ պիտի ընդգրկին այդ թիւում ազգայնամոլութեան եւ ուսուցիչի ծովում ծառայող քաղաքականութեան դէմ :

Շեստակովի դասագրքի հասցնելիք վնասը մասամբ կարող է մեղմանալ, եթէ Խորհրդ. Միութեան պատմութեան կողքին ուսուցչի եւ ազգային պատմութիւնը, այսինքն՝ եթէ հայկական դպրոցներում դասաւանդւի նաեւ հայոց պատմութիւնը եւ հայոց պատմութեան դասագիրքը կազմւի մանկավարժական նոյն սկզբունքներով, որով կազմւած է Շեստակովի գիրքը: Այսինքն՝ ոուս ցեղի անցեալ մեծագործութիւնների պէս խօսի նաեւ հայ ազգի պատմութեան փառաւոր երեւոյթների մասին. եթէ ոուս ազգի համար փայլուն դէպք է, օրինակ, շէնքերի եւ թաթարների դէմ մղած ազատագրական պայքարը, հայոց Վարդանանց պատերազմն էլ, կամ Վահան Մամիկոնեանի կռիւները, կամ Բագրատունեաց ու Ռուրիկեանց թագաւորների քաջագործութիւններն էլ պէտք է ներկայացնին դրական դոյներով: Եթէ Վլադիմիրի օրով ուսնների քրիստոնէութիւն ընդունելը՝ «յառաջադիմական» քայլ էր, պէտք է փառաւորի եւ Տրդատի եւ Գրիգոր Լուսաւորչի գործը: Եթէ ոուս մատենագիրների թողած ժառանգութիւնը մեծարւում է, պէտք է գովասանքով խօսի եւ հայոց ոսկեդարի ու հեռագայ ժամանակների թարգմանիչների ու մատենագիրների մասին եւ Սահակին ու Մեսրոպին, իրենց յաջորդներով, պատաւոր տեղ տրւի հայոց պատմութեան մէջ: Եթէ Իվան Ահեղի կամ Պետրոս Մեծի նւաճումները նկատոււմ են փայլուն գործեր, հայոց ազգային հերոսների շարքը պէտք է դրւին նաեւ Տրդրան Մեծը եւ ուրիշ մեծագործ թագաւորներ: Պէ՛տք է փառաբանւի եւ՛ հայոց վերջին կէս դարի ազատագրական շարժումը: Պէ՛տք է մեծարւին նաեւ հայ նոր մեծ դէմքերը՝ Արովեանները, Նալբանդեանները, Խրիմեանները, Ալիշանները, Քրիստափորները, Սիւրանթօները, Վարուժանները...

Մի խօսքով, եթէ ոուս ազգի պատմութիւնը մեղ հրամցւում է իբրեւ խորհրդային պատմութեան՝ ուսուցեան անցեալ մեծագործութիւններով եւ անցեալից եկած ժառանգութեամբ, նոյն սկզբունքներով պէտք է աւանդւի եւ հայոց պատմութիւնը՝ համապատասխան եղանակով կազմւած դասագրքով: Եթէ հայ դպրոցը այս իրաւունքը ունենայ, բողեւիկ Իլովայսկիների գործելիք բարոյական աւերը մասամբ կարելի կը լինի չեղոքացնել, հակառակ դէպքում Շեստակովիների գրքի նման դասագրքեր կը դառնան իրական աղէտ հայ նոր սերնդի համար:

Ս. Վ.Ր.

